ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԷԿՈՒՄԵՆԻԿ 12-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԲՈԶԵԻ ՎԱՆՔՈՒՄ

Սույն թվականի սեպտեմբերի 12-18-ը Բոզեի վանքում (Իտալիա) տեղի ունեցավ Ուղղափառ Եկեղեցիներին նվիրված Միջազգային Էկումենիկ 12-րդ համագումարը: Երկու գիտաժողով-նստաշրջաններին մասնակցեցին ավելի քան 200 ներկայացուցիչներ, այդ թվում՝ քրիստոնեական բազմաթիվ եկեղեցիներ ներկայացնող բարձրաստիճան հոգևորականներ, աստվածաբաններ, գիտնականներ և մտավորականներ: Հայ Առաքելական Եկեղեցին և Մայր Աթոռ Ս. Էջմիածինը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ և օրհնությամբ ներկայացրեց Հոգեշնորհ Տ. Զատիկ վրդ. Ավետիքյանը:

Երկու գիտաժողովների բացումն իր ողջույնի և բարիգալստյան խոսքով կատարեց Բոզեի վանքի հիմնադիր և միաժամանակ ներկայիս վանահայր Էնցո Բիանկի վարդապետը:

Համագումարի օրերին, զեկուցումներից բացի, կարդացվեցին քույր Եկեղեցիների պետերի և բարձրաստիճան հոգևորականների օրհնության ուղերձներն ու ողջույնի խոսքերը: Երկու գիտաժողովների ընթացքին էլ կարդացվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջույնի և օրհնության խոսքը: Առաջին ընթերցումը կատարվեց Ս. Խաչի տոնին մատուցված Ս. Պատարագին: Այդ առթիվ Հայոց Հայրապետի անունից ժողովի կազմակերպիչ և հյուրընկալ, Բոզեի վանքի վանահայր Էնցո Բիանկիին հանձնվեց Ս. Էջմիածնում պատրաստված փայտյա մի խաչքար, որպես Հայ Եկեղեցու եղբայրական աղոթքի ներկայություն այս վանքից ներս, և մի խաչքար, որպես խորհրդանիշ քրիստոնեական մեր ինքնության: Բոլոր ներկաներին միաժամանակ խնդրվեց աղոթելու նաև Հայ Եկեղեցու և նրա վանական շարժման վերածննդի համար:

Գիտաժողովներից յուրաքանչյուրը տևեց երեք օր, և յուրաքանչյուր օրվա աշխատանքները նվիրված էին տարբեր թեմաների: Ընթերցվեցին զեկուցումներ և կատարվեց մտքերի փոխանակում:

Առաջին գիտաժողովը, որ տեղի ունեցավ սեպտեմբերի 12-14-ին, նվիրված էր Հույն Ուղղափառ Եկեղեցուն, և գլխավոր թեման էր՝ «Ս. Աթանաս Ալեքսանդրացին և Ս. Աթոս Լեռան Վանականությունը»: Առաջին օրվա թեման էր՝ «Ս. Աթանասը և Աթոս Լեռան վանքերի ծնունդը», երկրորդ օրը նվիրված էր «Վանքերի ընդլայնմանն ու տարածմանը», երրորդ օրվա թեման էր՝ «Վերածնունդ և հանդիպումներ»:

Երկրորդ գիտաժողովը տեղի ունեցավ սեպտեմբերի 16-18-ին և նվիրված էր Ռուս Ուղղափառ Եկեղեցու հոգևոր գրականության մեջ Հիսուսի աղոթքին: Առաջին օրվա թեման էր՝ «Աղոթքի արվեստը», երկրորդ օրվանը՝ «Ուսուցում աղոթքի մասին», երրորդ օրը նվիրված էր «Աստվածաբանությունը և աղոթքը» թեմային:

ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Միջեկեղեցական հարաբերությունների բաժին